



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 13

ՇՎԱԲԱԹ

25 ՄԱՐՏ 1906

| Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ          | ԳԱԽԱՌԱՑ ՀԱՄԱՐ            | ԱՐՏԱՍՏՀՄԱՆԻ              |
|--------------------------|--------------------------|--------------------------|
| Տարեկան . . . . . 50 ՂԸ: | Տարեկան . . . . . 54 ՂԸ: | Տարեկան . . . . . 12 Ֆր. |
| Վեցամսեայ . . . . . 25 , | Վեցամսեայ . . . . . 27 , | Վեցամսեայ . . . . . 6 ,  |

## ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՑ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՑ անունը կեղծող կարգ մը նորեւուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՑ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ՋԵՆԻԹԸ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ՋԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հատոր 40 փաթա

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصادوریان) شرکت صریه مطبعه سی باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Այի ճառսկսի Թիւ 52



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի  
փանգամայն մեքենաներ  
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,  
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ  
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-  
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց  
և տաղտուկի ազդեցութիւն մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

**Ս Ի Ն Կ Է Ռ**

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՓԱԼԱՏԱՆ

**THE SINGER**

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,  
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՊԱՆԿԱՆՈՒՄ

ԲՆԲԱ

- ( 1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
- ( 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

- ( 1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
- ( 2. Դարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊԱԼԱՏ

- ( 1. Սուլթան համամ .
- ( 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԿԻՒՏԱՐ

Զարչը Պօյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնահիշեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ  
343 կրկին, Տիւզդուրի տունը:

## Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅԾ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 4860 ԻՆ Ի ՎԻԵՆՆԱ

ԳԵՆԱՆՔԻ ՃԻՒՂ

Իրանագոյնի եւ Պահեսի գումար

31,008,000 ՖՐԱՆԲ

ՀԻՒԵՂԻ ՃԻՒՂ

Իրանագոյնի եւ Պահեսի գումար

17,000,000 ՖՐԱՆԲ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և  
կարասիք:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք  
մարդկային կեանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգե-  
նաւի՝ և առաջատանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է Քրիֆթի ԼիՕնէ, Ընդհանուր գործակալութեան  
գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր ներկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 13

ԵԱԲԱԹ

25 ՄԱՐՏ 1906

### ՄԱԼԽԱՍ Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Վ Է Ճ Ը

Գր. Մալխասի թէ՛ ֆրանսագիտութիւնը և թէ՛ հայերէնագիտութիւնը ա՛յնքան ջախջախիչ փաստերով իրենց նուազագոյն աստիճանին իջնելէ վերջ, չէր սպասուեր որ Միջակորեարին թարգմանիչը տարօրինակ եղանակի մը գիմում ընէր փլուզուած համբաւ մը կարկատելու համար:

Տ. Անդրէասեանի ուղղակի չպատասխանելով, և անոր մատնաշած սխալներուն առջեւ կարմրած, չիկնած, երեւակայական քննադատներ, ուրուականներ կը փնտռէ իր շուրջը, մասնաւոր նամակներ կը գրէ թէ « դուք օգնած էք Տ. Անդրէասեանին, թէ՛ դուք թելադրած էք, թէ Ղալաթիայէն միայն ֆրանսագէտներ կ'ենեն, թէ Սկիւտարէն ֆրանսագէտ չեն »: Ասանկ տողեր ստորագրած է Մալխաս

ծանրախոհութեան ի՞նչ տեսակ ապացոյց մը տալով: Արդարեւ չէր սպասուեր ասոնց: Տարօրինակ, և տղայական է պարզապէս այս Մալխասեան ընթացքը: Հ. Ղազիկեանի և Նուպարեանի դէմ քննադատութիւններ ըրած միջոցին կարծուեցաւ թէ քննադատի և բանիմացի ժօն մը կայ վերջապէս անոր մէջ: Բայց հիմա ո՞ր լուրջ խորհողը պիտի կրնայ տօկալ այս կարծիքին փորձութեան, երբ կարդայ Մալխասի մէջ Մալխասի ուղղակի կամ անուղղակի ծիծաղելիութիւնները:

Բայց թոիւր շատ պարզ է ըստ ինքեան:

Որպէս զի Մալխաս քննադատական բանավէճին խառնակ գոյն մը տայ, և մոռցնէ իր անպատասխանատու մնալուն հեգնութիւնը, կը կասկածի տա-

բապարտուց թէ Պէրպէրեան էֆէնտի կը թեւադրէ Տ. Անդրէասեանին՝ Մալխասի սխալները երեւան բերել, թէ արժանայարգ ուսուցչապետը տուն կուտայ անոր դատաւիտել զՄալխաս :

Պէրպէրեան էֆէնտի Մանգումեի մէջ կը պատասխանէ, և չէզոք ընթերցողներու համար վճռական է Պէրպէրեան էֆէնտիի դատաստանը Միջակորեարի թարգմանութեան առթիւ, թէեւ Մ. Մալխաս քանինե՞ր արդեօք խնդացուց, երբ Մասիսի մէջ յայտարարեց թէ Պէրպէրեան էֆէնտին իբրեւ քառքի կ'ընդունի և ոչ իբրեւ առպիթոր :

Տօն Գիշօթական փորձ մը այս ամբողջն ալ :

Խորհեցէք թէ ի՞նչ անախորժ տըպաւորութիւն կը գործէ մարդու մը վրայ այն երեւակայական յարձակումը, որով կ'ըսենք, կը գրենք մեր դիմացինին թէ դուն ինձի հակառակորդ ես, դուն իմ քննադատիս տուն կուտաս, դուն . . . կը շարագրես ինձի դէմ ըսուածները : Ո՛չ, ո՛չ, պարզապէս ծիծաղելի է ասիկա :

Մեր կարծիքով, կատարեալ լռութիւն մը լաւագոյն էր Մալխասի զրախաղութեանց այս թոխին դէմ, բայց Պէրպէրեան էֆէնտիի պատասխանն ալ սա՛ դոհացուցիչ արդիւնքը կ'ունենայ որ Մալխասի թարգմանչի անկարողութեան վրայ տակաւին կասկած ունեցողները բոլորովին կը լուսաւորուին բազմահմուտ ուսուցչապետին ծանօթ յօդուածէն վերջ, քանի որ Պէրպէրեան էֆէնտիի համար Մալխաս չի կըրնար ըսել թէ « դուն տէրտէրցու ես, դուն տիրացու ես, դուն շարական միայն կրնաս թարգմանել » : Ամէն պարագայի մէջ, յայտնի է թէ Պէրպէր-

եան տիրացու չէ, տէրտէրցու չէ, և շարական ալ թարգմանած չէ, այլ Մալխասը կարգացնող սերունդներ դաստիարակած է . . . միայն :

Ի՞նչ մեծ զրկանք Պէրպէրեան էֆէնտիի համար, զոր Մ. Մալխաս չի բարեհաճիր իրաւարար ընդունիլ : Ես հակառակին վրայ պիտի զարմանայի, Մասիսի և Արեւելի մէջ Մալխասի գրելու, խորհելու եղանակը ուսումնասիրելէ վերջ :

Բայց հարկ չկայ աւելի երկարելու այս մասին : Կոնքուռի Միջակորեարին սահմանուած է եղեր պարզաբանելու մեզի Պ Մալխասի ո՛չ միայն փրանսերէնի և հայերէնի հմտութիւնը, այլ նաեւ ոգին, որով կը շարժի, և զգացումը որով կը գելուի :

Փրանսերէնի հմուտ գրավաճառ մը յայտարարեց մեզի անցեալ օր . — Տ. Անդրէասեանի քննադատութիւնը խիստ անբաւական էր Մալխասի թարգմանութեան համար : Իւրաքանչիւր էջի վրայ կը վիտան հակացողութեան, ոճի, բառի և իմաստի սխալներ : Կոնքուռի այս տեսակ հայացումը մահացումն էր փրանսացի պատուական հեղինակին, որ ապահովապէս իր ժողովրդականութիւնը պիտի կորսնցնէր Բարիզի մէջ, եթէ Մալխասի հայերէն Կանքուռ փրանսերէնի թարգմանութիւնը որ բոլոր օտար փրանսագէտները պիտի չկրնան Մալխասի հայերէնը փրանսերէնի թարգմանել, որովհետեւ Մալխասի հայերէնը . . . անթարգմանելի է :

\* \* \*

Աւետարեւ, որ շատ անգամ բարեկամ կ'ըլլայ այն թարգմանիչներուն, որոնց գրած հայերէնէն բան մը չհաս-

կրցուիր, անուղղակի կերպով թեր կ'ենէ Մալխասի թարգմանութեան, Տ. Անդրէասեանի քննադատութեան ոճը դատապարտելով: Կ'երեւի թէ Աւետարան Արեւելքը չի կարդար, ծայրայեղօրէն զգլխած ըլլալով Սրբրճընի քարոյններէն, ապա թէ ոչ՝ հոն պիտի տեսնէր թէ իր պաշտպանած Մալխասը ի՛նչ բառեր, ի՛նչ ձեւեր կը գործածէ իր քննադատը վարկաբեկ ընելու համար, ֆննդատութիւնը փութադրելով Անձնականութեան գեանին վրայ, մինչ Տ. Անդրէասեան գործնական, և յոյժ պարզ մէթոտով մը ի վեր հանելէ վերջ Մալխասի թարգմանութեան սխալները, կը յայտարարէր թէ ի՛նչ հարկ կայ երկար բարակ «տգէտ ես, խեղճ ես, տիրացու ես ըսելու, հրամմեցէ՛ք մրցինք, մրցման նիւթը, եղանակը, ժամանակը դուք ընտրեցէք»:

Առաջարկի այս ձեւը ի՛նչ ունի իրեն մէջ առարկելի, և Աւետարան ի՛նչ հովէ մղուած թեր կ'ենէ Մալխասի և զէմ՝ Տ. Անդրէասեանի: Քննադատին և քննադատեալին ալ գրածները մէջտեղն են, և Աւետարան կրնայ ուսումնասիրել զանոնք, և այնուհետեւ իր կարծիքը յայտնել իր Բերայի քրդակցին ըսածին վրայ: Զէ՛ մի որ բոլոր ուղղադատ մարդոց սկզբունքը պէտք է ըլլայ. — «Սուրբ Գիրքը քննեցէք և բարին ամուր բռնեցէք» Առաքելական պատուէրը, մանաւանդ քանի որ տարակոյս չկայ թէ Աւետարան չի կրնար համամիտ ըլլալ Պ. Մալխասի, որ Ս. Գիրքէն ու եկեղեցական երգերէն օրինակ բերողները, զանոնք թարգմանողները ճիշտացու կը կոչէ արհամարհոտ չեչուով: Բողոքական, Կաթոլիկ, Յայն և Հայ եկեղեցիներուն մէջ առ հասա-

րակ բոլոր հին ու նոր մեծ գրողներէն շատերը միեւնոյն ատեն տիրացու եղած են, եկեղեցական եղած են, քարոզիչ, հովիւ, վարդապետ և սարկաւագ եղած են, և այս չըջանալէն դուրս Մալխասի նման երկրորդական գրիչներ ալ՝ սխալ թարգմանիչներ առ առաւելն:

S.

ԱՍՈՒԼԻՍՏԵՐ

## ՄԱՐՏ ԱՄԻՍԸ

Հազիւ թէ կը խնդաս գարունին աղուոր մօտաւորութեանը առջեւ, ահա յանկարծ սա Մարտ ամիսը կը ցցուի զէմդ իր յարափոփոխ օդերուն խառնուրդին մէջ պարուրելով ինքնութիւնդ իր անտանելի խաղերով մերթ խնդացնելով, մերթ տխրեցնելով հոգիդ ալ, սիրտդ ալ, կազմուածքդ ալ...:

Իրաւ որ ես ամիսներուն ամենէն հետաքրքրականը նկատած եմ այս մարտ ամիսը:

Գարնանային մեղմ օդ մը ծայր կառնէ յանկարծ, ու հազիւ թէ ամառուան մը կազդուրող ջերմութեանը մէջ իր իրիկնամուտին պիտի մօտենայ ու աղուոր օդով այդ օրն ալ անցուցած ըլլալուդ գոհունակութիւնը պիտի տայ քեզի, մէկ մ'ալ կը նայիս որ սառեցնելու աստիճան պաղ հոսանք մը ծայր կ'առնէ մէկէն ու խոր ձմեռուան պատրանքին տակ՝ կը մտնէս տունէդ ներս, ժամ առաջ կծկուելու համար վառարանիդ մօտ: Ու այսպէս շարունակաբար կը յաջորդեն օրերը մինչեւ որ 30-31 օրերուն չըջանք վերջապէս տեղի տայ իրապէս գմայլելի գարունին ոգեւորող օդերուն:

Ատենով շատ մը պատմութեանքներ իմացած էի այս գարնանայի ամսուան վրայ, բայց ամենէն սրամտօրէն հիւսուածք մը, պատմութեանք մը, որ իր մէջ խտացուցած է կատարելապէս գեղեցիկը ու զուարճալին, ճիշտ վայրկեանին է որ կուգայ իյնալ գրչիս տակ եւ կարծէ որ պատմեմ իմ կարգիս Հանրագիտակի ընթերցողներուն:

Կը պատմեն թէ, օր մը տարուան բոլոր ամիսները իրարու կը հանդիպին: Յունուարը եւ Փետրուարը Դեկտեմբերին կը հետեւին ձիւներու կոյտին տակ ծանրաբեռնուած կորաքամակ քալուածքով մը, անդին Ապրիլը եւ Մայիսը իբր զուարթ զոյգ մը, ոգեւորուած խօսակցութիւնով մը կը շաղակրատեն իրարու հետ, ու ամբողջ կեանք մը, վերազարթնում մը կը ցանցեն իրենց չորս դին: Քիչ մը անդին Յունիսը, Յուլիսը եւ Օգոստոսը խրոխտ նայուածք մը կը հետեն ամէն բանի վրայ ու խանդավառ ջերմութիւնով մը բնութեան իբր ամենէն կենսական պարգեւը կը նկատեն ինքզինքնին, պարծեկաւ շարժուածքներով: Աւելի հեռուն Սեպտեմբերը, Հոկտեմբերը եւ Նոյեմբերը կը շրջազային իրարու հետ: Ու անոնց իւրաքանչիւրը իրենց բնութեան հանդէպ ունեցած բարիքները, ձեռնտուութիւնները կը շնորհակցեն, կը խնդան, կը պոռչտան, կ'երգեն՝ կը վազեն իրարու ետեւէ, կը հեռանան իրարմէ, կը մօտենան նորէն, միշտ կատարեալ ներդաշնակութեան հիւսուածքով մը, իւրաքանչիւրը իրենց տրամադրութեան համեմատ, եւ իրենց կատարելիք դերին լիովին գիտակից թափով մը: Եւ սակայն Մարտ ամիսը, տխուր երեւոյթի մը տակ բոլորովին մէկուսացած կը դեգեբի անոնցմէ հեռու վայրի մը վրայ:

Յանկարծ Փետրուար ամիսը, որ Ապրիլին հետ միասին պահ մը առաջ իրենց Մարտ բարեկամին ընկերակցութեամբ կը շրջագայէին, կը մօտենան իրենց ընկերոջը եւ անոր տխուր երեւոյթ մը ունենալը կը հարցափորձեն, հրաւիրելով իրենց միւս ընկերները, դարման մը խորհիլ անոր վիշտը մեղմացնելու համար ...:


Մարտ ամիսը կը պատմէ իր ցաւը, յայտարարելով թէ իր բոլոր ընկերները ամբողջական օրեր ունին, մինչդեռ ինք՝ հազիւ մէկ քանի օրերու կեանքը ունեցած է միշտ, քանի որ ձմեռուան ու գարունին մէջ տարուրեր դիրք մը ունի, եւ իրեն վիճակուած օրերուն մէկ մասը ձմեռուան, իսկ մնացեալ օրերը գարնան կը փոխանցուին: Ամիսները կը միանան, կը խորհրդակցին ու կ'որոշեն իրենց Մարտ բարեկամին մէկ կամ աւելի

օրեր փոխ տալ, պայմանաւ որ ան՝ պարտաւոր ըլլայ իւրաքանչիւրին կողմէ շնորհուած օրերը նոյն իսկ իրեն յանձնուած վիճակին ու երեւոյթին տակ ներկայացնել ու գործածել անխարդախ աւանդապահ մը ըլլալով միայն:

Ու կը պատմեն թէ, Մարտ ամիսը շատ պատուաւոր կերպով կը կատարէ իր խօստումը այն օրէն սկսեալ, եւ ահա թէ ինչո՞ւ համար օր մը կը տեսնենք որ շիանալի ամառուան օդ մը կը վայելենք, օր մը աշնան, օր մը ձմրան խստաշունչ օդ մը, եւ յաջորդին գարնան վերազարթնումը կ'զգանք մեր շուրջը, բնութեան այդ խաւերուն ներքերանգ ու դիւթիչ ներդաշնակութեանը դրուագներովը համեմուած ...:

Հիմայ որ մեր բոլոր կիները եւ աղջիկները սովորութիւն ըրած են ամէն տարի անխօսափելիօրէն հետեւիլ Մարտ ամսուան փոփոխումներուն, մէկ մէկ օր վերապահելով եւ իրենց կեանքին ներկան ու ապագան կանխագուշակելով հոն անիմաստ աւանդապահութիւնով մը, իբր թէ անոնք բախտագուշակներ ըլլային ուղղակի միւս ամիսներուն՝ իրենց Մարտ բարեկամին հանդէպ ցոյց տուած բարեհաճ ձեռնտուութեանը չե՞ն պարտիր միթէ:

ՌՕՄԱՆ Տ. ԽՈՍՐՈՎ



- Ծօ տղայ վարպետդ ո՞ւր է:
- Տեղ մը գնաց:
- Ո՞ւր գնաց քի:
- Ծաւ կարեւոր գործ մը ունի, ան ղնցնելու գնաց:
- Ծօ ո՞ւր, չքսե՞ս:
- Հօրեղբայրը կը մեռնի կոր:

×

- Առանց ամուսնանալու ծեւացած կիւնը ինչի՞ կը նմանի:
- Նամակասունը մնացած նամակի մը:

×

- Ի՞նչ է այն, որուն թէ կը փախափենք հասնիչ եւ թէ անկէ կը ստականք:
- Ծերութիւնը:

ԳԻՏԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Ելեկտրական լողանք

Մ. Իժմաքի, բրոֆ. Տրէզտոֆի նախա-  
ձեռնութեամբ, կարգ մը փորձեր կատարած  
է ջրային տկարութենէ տառապող հիւանդ-  
ներու վրայ, երեւան հանելու համար ելեկ-  
տրական լողանքին առաջ բերած բնախո-  
սական ազդեցութեանց տեսակները եւ անոր  
բուժիչ հանգամանքը:

Ի ստորեւ կը նշանակենք յիշեալ գիտ-  
նականին ձեռք բերած յաջողութեանց էա-  
կան մասերը:

27<sup>0</sup> բարեխառնութեան տակ, ելեկտրա-  
կան հոսանքի լողանք մը հիւանդին ամբողջ  
մարմնոյն հեշտալի զգայնութիւն մը կուտայ:  
Եթէ հոսանքին զօրութիւնը կրկնապատկուի,  
մկանային պրկում եւ կծկում առաջ կուգայ,  
առանց ցաւ պատճառելու, պայմանաւ որ  
հոսանքը չափէ աւելի զօրաւոր չըլլայ:

5-10 վայրկեան տեւողութիւն ունեցող  
լողանքէ մը յետոյ, շնչառութիւնը եւ ե-  
րակներուն զարկը կը կանոնաւորուին ու կը  
հանդարտին: Լողանքէն անմիջապէս յետոյ  
մկանային զօրութիւնը նախապէս կը նուազի,  
եւ յետոյ աստիճանաբար մեծ համեմատու-  
թիւն մը կ'առնէ. մարմնոյ ծանրութիւնը  
ղգալարար կ'աւելնայ:

Ելեկտրական լողանքին բուժիչ հանգա-  
մանքը ճշդելու համար նախապատուութիւն  
տրուեցաւ անարիւնութեան կամ անսնունդ  
մնալու հետեւանքով ջրային տկարութեան  
ենթակայ եղող հիւանդներուն: Այդ առթիւ,  
անգամ մը եւս հաստատուեցաւ թէ ելեկ-  
տրական լողանքին ազդեցութեան տակ,  
հիւանդին ակորժակը եւ մարմնոյն ուժը  
զգալի բարեփոխում մը կը կրէ, ջրային պար-  
բերական գրգռումներուն տեւողութիւնը եւ  
սաստկութիւնը կը նուազին, յօդացաւերը  
կը մեղմանան, անուժութենէ առաջ եկած  
սարսուռները եւ դողերը աստիճանաբար կը  
ղաղրին եւ ջրային որ եւ է խանգարում  
արագապէս եւ տեւական կերպով կը կանո-  
նաւորուի:

Մէկ խօսքով ելեկտրական լողանքի կա-  
նոնաւոր եւ յարատեւ կիրառութիւնը բարե-

րար ազդեցութիւն ունի մեր առողջական  
վիճակին վրայ, եւ հիմնովին կը բարեփոխէ  
մարդու ջրային դրութիւնը:

Զուարթ իշխւալ մը

Տարօրինակ լուրերը ընդհանրապէս Ամե-  
րիկայէն կուգան:

Արդարեւ, վերջերս Նիւ-Եօքքի մէջ նոր-  
օրինակ քիւլա մը կազմուեր է «կցեղատա-  
պի քիւլա» անունին տակ: Այդ ընկերու-  
թեան անդամակցելու համար թեկնածուն  
պարտաւոր է այդ աւելորդ միանգամայն  
աղետարեր գործարանին անդամատուութեան  
ենթարկուած ըլլալ:

Այս եզական քիւլալը, որ առաջինն է իր  
տեսակին մէջ, ունի մասնաւոր կանոնագիր  
մը, որ անդամակցիլ ուզողներէն կը պահան-  
ջէ բժշկական խիստ քննութիւն մը եւ վի-  
րարութեան լուրջ գործողութիւն մը աղիք-  
ներու այդ յաւելուածական մասին վրայ:

Ընդունելութեան օրը, նորընտիր ան-  
դամը պարտի ամենուն ներկայութեամբ հը-  
րապարակախօսութիւն մը ընել կցեղատապի  
հիւանդութեան վրայ: Ընկերութեան մէջ  
մէկէ աւելի անդամներ ընդունուելու օրը,  
մեծ խրախճանութիւններ, չքեղ հացկերոյթ-  
ներ եւ խանդավառ բաժակաճառեր կ'ար-  
տասանուին քիւլային սեպհական հսկայ շէն-  
քին մէջ, ուր կցեղատապին ունունը որո-  
տընդոստ ծափերու եւ հուրրաներու կ'ար-  
ժանանայ:

Գրեւ առանց գրիչի ու մեղանի

Հնարագէտ եւ ինքնատիպ մարդուն մէկը  
մի եւ նոյն ատեն շատ մը թերթերու մէջ հե-  
տեւեալ ազդը տպել կուտայ:

« 1 Փրանգի փոխարէն

« Ես պիտի սորվեցնեմ առանց գրիչի եւ  
մելանի գրելու եղանակը »

« Դիմել . . . . . հասցէին » :

Այս նորօրինակ ծանուցումին վրայ ամէն  
կողմէն կը սկսին նամակներ տեղալ վերոյիշ-  
եալ հասցէին, եւ նոյն օրուան թղթաբերով,  
իւրաքանչիւր ամաթէօր, հետեւեալ պարզ  
եւ լակոնական պատասխանը կ'ընդունի:

« Մատիտ մը առէ՛ք » :

ՀՐԱԶԵԱՅ ՏԵՐՈՍԿԻ

## ԳԻՐ ԶՂԶՄԱՆ

## ՏԻՐԱՑՈՒՅԱԿԱՆ



Ի ծննդենէ Ս, Աւագանին մինչև ցայսօր տիրացու մը եղած եմ, եւ ամենայն սիրով ու յօժարութեամբ շատ մը մենծաղայական թափուռներու հանդէպ Յորական համբերութիւն ունեցած եմ. նոյն իսկ պալլիսի Գասպարին՝ որ ստորագրութիւնը դնել չը գիտեր, ներկայացած ատենս քոմբիման քօմբլէով ժաքէթիս կոճակները կոճկելով, Միւսիւ Գասպար ըսելու խոհեմութիւնը ու հեղութիւնը (կը խնդրուի իմ հեղութիւնը եղութիւն չը մեկնել ըստ պերճախօս քարոզչի) ունեցած եմ. եւ վերջապէս դեռ շատ մը ըլլալիք ու չըլլալիք բաներու համբերած ու երբէք զղջացած չեմ տիրացու մը ըլլալուս, սակայն այսօր զղջալով կը զղջամ ու կը գրեմ ներկայ զղջման գիրս:

Եւ քանի որ առանց պատճառի բան մը չըլլար, ու գիտեմ թէ գլխու ցաւի յարմարութիւն չունեցող սիրելի ընթերցողներս իրենց պարապ ժամերուն թերեւս ուզեն իմանալ զղջման գրոյս պատճառը, ուստի կը պարտաւորիմ այս միջոցիս տիրացութեան ձեռքէն քաշածներս պատմել, եւ ապահով եմ թէ՛ վիճակիս վրայ պիտի արգահատին ամէն անոնք, որոնք եթէ երբէք կուտ չունին գէթ քիչ մը գութ ունին:

X

Այն օրէն ի վեր, երբ հոգեցունց, հոգեթով, հոգեթունդ, հոգեշարժ, հոգեզմայլ, հոգեպտարթ, եւլն. եւլն. Եւռաձայն՝ երգեցողութիւն կատարուեցաւ, հաւատացէք որ ոչ գիշեր հանգիստ ունիմ եւ ոչ ցորէկ:

X

Սովորականին պէս առաւօտ մ'ի, հազիւ արշալոյսը կէս ժամ անցած՝ անկողնէս կելլեմ, ու յետ աւարտման սովորական արարողութեանց՝ կըսպասեմ կաթնափածառին, վասն զի սովորութիւն ունիմ ամէն առաւօտ

կաթով սուրճի-տակ (որ թարգմանի գահվէ ալթը) ընել, եւ ահա կուգայ կաթնափածառ Պ. Սահակ, ու կառնեմ կաթս, եւ երբ կը պատրաստուիմ դուռը գոցել՝ կաթնափածառը:

— ԱՖ կընես աղա. քեզի ըսելիք մը ունիմ, ծունկերս կը կթոտին, կաթը ձեռքէս թափելու աստիճան ձեռքերս կը դողան:

Ու մտովի պատասխան մը կը փնտռեմ, ապահովապէս գիտնալով որ՝ բլաթկայապատիւ չէթլէթի մասին է ըսելիքը, ու կ'ըսեմ.

— Ի՞նչ է ըսելիքդ Պ. Սահակ, ըսէ տեսնեմ:

— Աղա, դուն օլտուխձա էլէ կէլիւ տիրացուներէն ես, անոր համար քեզի կըսեմ կոր, աճապա սա եռաձայն ըսածնին ինտո՞ր պան է:

Կը հանդարտիմ, որովհետեւ ըսածը իմ կասկած ըրածս չէր, ուստի ինքզինքս կը գտնեմ, ու կը ջանամ հասկցնել, որչափ որ նա կրնար հասկնալ ու Պ. Սահակ կը մեկնի, եւ սակայն ես առտուն կանուխ գիշերնոցով դռան առջեւ լաւ մը պաղելով՝ էնֆլիւէնձայի նախապատրաստութիւն մը կուենեմ:

Երբ դուրս կելլեմ տունէն՝ գործիս երթալու, մտածկոս ու յամրաքայլ, յանկարծ ձայն մը կը լսեմ, տիրացու, տիրացու, կանգ կառնեմ, չորս կողմս կը նայիմ ու կը տեսնեմ հացագործ եղբայր մը, որ բեռնալից ձիուն սանձը քաշելով ինձ կը մօտենայ. կը մտածեմ թէ՛ արդեօք զիս իրեն պարտականներէն մէկո՞ւն նմանցուց, քանի որ իմ հացագործս չէր, եւ իմ հացագործս արդէն ինձ հետ շատ անուշ լեզու ու քաղաքավար կը վարուի, թերեւս Ֆլիմիքօն անցուցած ըլլալու համար, բայց նորէն երբ վճարման համար սովորական այս ամսագրիսունը ըսեմ՝ ինք միւս ամսագրիսուն կը հասկնայ, ինչու որ գիտէ թէ իմ ամիսներս միլշթրէք եմ ու 61 օր կը քաշեն, ու երբ

ես այսպէս կը մտածեմ, հացագործ եղբայրը կը մօտենայ ինձ ու կըսէ .

— Քուզում տիրացու պատուելիս, հոգիդ սիրես ըսէ տեսնեմ, ի՞նչ է եղբոր սա եռաձայն ըսածնիդ :

Մտաւտանջութիւնս կը փարատի ու կը հասկցնեմ, որչափ որ նա կրնայ հասկնալ, ու կը բաժնուինք :

Հազիւ քսան քայլ առած եմ՝ դէմս կելլէ բարեկամ մը, որ կշտապէր չոգենալին հասնելու համար, զիս տեսածին պէս, հա՛ աղէկ հանդիպեցայ, ու ժամացոյցը նայելով,

— Շոգենաւի ժամանակ ալ չունիմ ամա հոգ չէ միւսով կերթամ, կաղաչեմ ի՞նչ է եղբոր սա եռաձայնը, որ այսչափ կը գովեն կոր լրագիրները :

Հարկ չըկայ ըսել, ամէն մարդ կրնայ գիտնալ թէ՛ ի՞նչ կանցնէր նոյն միջոցին մոթէս, բայց քանի որ շատերուն հասկցածէն աւելի քաղաքավարութիւնը կը հասկընամ, հետեւաբար մինչեւ միւս չոգենալին ատենը չանջան կընեմ, մնացեալը արնառի՞ ձգելով, ու կը շարունակեմ ճամբաս : Այն ինչ կը դառնամ փողոցին անկիւնը, եւ ահա թը՛գ թը՛գ թը՛գ, պատուհան մը կը դարնուի, վեր կը նայիմ, կեցի՛ր տիրացու կեցի՛ր բան պիտի ըսեմ, կը կենամ, կսպասեմ տասը վայրկեան, եւ ահա դուռը կը բացուի ու գիշերնոցով դէմս կելլայ պատուհանը վարնոցը, որ բարեպաշտ հաւատացեալ մըն էր :

— Քեզի ճամբայէդ ալը խօսիչ ըրի ամա ափ կընես, բէք մէռսք ըրի տէ անոր հոմար :

— Խեր ըլլայ, ի՞նչ կայ ըսի, կարծելով թէ՛ մոտաւտանջութիւն պատճառող բան մը պատահած է :

— Քուզում տիրացու, աս սկսէքի ամէն օր զապէթաները կը կարդանք կոր քի ժամերը քի թիւն եռաձայն պիտի կարդան աէյի, բէք մէռաք ըրի տէ միտքս դրի քի քեզի մէյմը հարցունեմ սէյի :

Բան մը չէի կրնար ըսեր, քանի որ տիրացու մըն էի, պարտաւոր էի պատասխանել, ուստի ինչ որ ալ եւս եզպէր ըրած էի՝ նոյնը կրկնեցի հոն ու մեկնեցայ, մտովի սակայն կարդալով՝ ինչ որ մարդ կը կարդայ այսպիսի պարագայի մը մէջ, ու կը շարունակէի

ճամբաս, նաեւ երբեմն երբեմն ալ մենախօսելով. եւ ահա դէմս կելլէ մեր ժամուռն Տեմիւրպաշ հաւատացեալուհի էպրոս տուտու, իր շնորհագին թոռան հետ, կեանքի ու գեղեցկութեան կենդանի հակապատկերներ :

— Պարի լուս օրթտի, քա քուզում եաւլրում, էս չեմ հասկնար ամա, Անժէլս հեռուէն քեզի տեսաւ նէ, եալվար էղաւ քիմ՝ գուզում ետեսաւ մէյմը հարցուր տէյի :

— Հրամայեցէք տիկին, հարցուցէք, եթէ գիտցած մէկ բանս է՝ ամենայն սիրով պատասխանեմ :

— Մեղա՛յ, ի՞նչէն չը պիտի կիտնաս, տուն տիրացու չե՞ս գէյէր, սա վուր է էռածան կըսեն կոր նէ, իշտէ ան պիտի հարցունենք քիմ ինտո՛ր պան է տէյի :

Գործը եթէ մինակ էպրոս տուտուին հետ ըլլար, հաւատացէք որ մտովի կարգացածներս ամենքն ալ բարձրաձայն պիտի կարդայի, բայց քանի որ գեղանի օրիորդի մը հետաքրքրութեանը գոհացում տալու կոչ մը կըլլար, կոշտութիւն մը չընելու համար՝ չեմէիս չիլիկն թուլցուցի, լէզուիս կապը քակեցի ու եզպէր ըսի, ի փոխարէն ընդունելով շնորհալի խոնարհութիւն մը որ խոնարհեցուց բարկութեանս աստիճանը : Քիչ մը չունչ ու հանգիստ առնելու համար կը մտնեմ սրճարան, այն ինչ կը նստիմ՝ եւ ահա պրոյնի Տեքուի սրճարանապետը եհեմէնիսկիւր ոտքերով՝ նազելաճեմ ինձ մօտենալով :

— Տիրացու միւսիւ, (ածական մը որ խահուէճիին, պախալին եւ խասապին կողմանէ շատ կը շռայլուի մեզ մեղաւորացս), աս վու՛ր էք չէք էրէվար կոր, զիրա հոս ամէն ատեն միւշտէրինիս սա Զիլինկիրեանի իճատ ըրած ժամուռն էզկիին վրայ հաճականութիւն կընեն կոր, էս ալ ըսի քիմ ատանկ պաները ծեզի համար ան կը հասկնայ տէյի, հօշ քիչ մը նստիս նէ հիմա վուր էն նէ կուգան աղւոր մը խօնուէմիչ կըլլաք :

Բաղդ ունէր Պ. Սրճարանապետը որ բարկութեանէս լէզուս բռնուած էր, ապա թէ ոչ . . .

Ու երեք ֆըռթով սուրճը խմեցի ու սրճարանէն դուրս նետուեցայ մարդիկները չեկած :

Սակայն ո՛վ թշուառութեանս, ուր որ կերթամ եռաձայն, ճաշարանը եռաձայն, չոգենաւին մէջ եռաձայն, զբօսարանը եռաձայն, բարեկամի մը հանդիպելուդ եռաձայն, բաղնիքը եռաձայն, շուկան եռաձայն, առտուն եռաձայն, իրիկունը եռաձայն, բարի լոյս եռաձայն, բարի իրիկուն եռաձայն, ու եռաձայն երթեալի եռաձայն, եւ ահա այս պատճառաւ զղջալով կը զղջամ այս միջոցիս է որ տիրացու մը ըլլալուս համար:

X

Յ.Գ. Մեր առած տեղեկութեան համաձայն, յարգելի ինձսնին (որ թարգմանի հեղինակ) եռաձայնին ընդհանրացմանը համար հրաւեր կը կարդայ եղեր Բերայի բարեկեցիկ դասուն աջակցութեանը, (իբր թէ Բերացին չունի եղեր գէթ իրեն չափ եռաձայն մը նոյն իսկ հեղինակելու կարող երաժիշտ մը), նաեւ կիմանանք թէ եռաձայնը Աւագ Հինգշաբթի երգուելու համար նախապէս տրուած որոշումը, կուզուի եղեր ուրիշ օրուան յետաձգել, ինչու որ բազմութենէն բուն եռաձայնէն հասկցողները բան մը չեն հասկնար կոր եղեր, ինչ որ ալ ըլլայ կը մաղթեմ մեր կողմէ յաջողութիւն, կարողութիւն, փառք յաւիտեանս ամէն:

Մնամ

Սկիւտար

ԵՐՄՈԳ

## ՎԱԾԻ ԻՄ ՍԵՐՍ

[ԾԵՔԾԵՔՈՒՄՆԵՐ]

Վա՛խ իմ սէրս, իմ առաջին անոյշ սէրս ո՛ւր ես: (Զիս Պէպէքի պարտէզը ձգելու մոռցա՞ր):

Ո՛ւր ես իմ առաջին սէրս: Բեզ կորսնցընելէս ի վեր ոչ գլուխս խելք մնաց ոչ ալ գրպանս կուտ:

Ի՛նչ որդ է որ մտեր է քու մէջդ կը կրծէ քեզ, ու դուն ո՛հ նորէն, ա՛հ նորէն, աւա՛ղ կրկին չես հատնիր, չես ըմնար:

Երբ իմ բաղձանքներուս եւ ազգականներուս պէս դուն եւս մեռնիս, քեզ եւս թաղեմ, ի՛նչ պիտի ըլլայ իմ վիճակս:

Զար աղջիկ, դուն վեր գացիր, քաւան իջին ելար, մինչ ես հոս վարը մնացի, (սոհանոցը: (Խոհերու վայրը):

Դուն վերէն կուլաս, ու քու այդ մարգարիտ ցօղ արցունքներդ սրտիս կրակը կը մարեն:

Զէ, միւլար, չեմ ուզեր որ 44 թունդօ մատներով վառած կրակդ հիմայ մարես:

Թո՛ղ այրիմ ամբողջովին, հատնիմ ըմնամ, վախ չունիմ երբեք, քանի որ 2000 ոսկիի ապահովագրած եմ կարասիներս (Փո՛րդ ալ):

Վերջին անգամ երբ քեզ տեսայ, թարմ ու գեղանի աղջիկ, ձեռքդ համակ ստեպլինի փունջ մըն էիր բռնած:

Բու այդ ստեպլինի փունջը այնչափ հըմայեց, այնչափ թովեց, այնչափ անէացուց զիս, որ ալ սկեսպիկ մը եղայ պարզապէս:

Շատ ծանր հիւանդութիւններ քաշեցի բայց ամէնէն ալ ողջ պրծայ:

Ծաղիկ հանեցի, անջնաս ազատեցայ: Կողացաւ եղայ, բայց անկէ ալ առողջանալու մայրս փառք տուաւ Աստուծոյ ու գոհացաւ:

Շատեր զիս ԱՆՅՈՅՍը կոչեցին:

Բայց քու սէրդ, ա՛հ քու այն սէրդ, ո՛հ քու այդ սէրդ, ափսո՛ս քու այս սէրդ հատցուց, ըմնուց զիս, անանկ որ հիմայ զիս ԲԱՆՍԷՆԻԸ կը կոչեն իրաւամբ:

Ո՛հ, ո՛ւր են այն գեղեցիկ լուսնոտ գիշերները, երբ մէկ անութիւն տակ սիկուր-քանիի պարութեան գրկած ու միւս անութիւն տակ ալ քու փափկիկ թեւիկդ սեղմած լուսնոտի պէս վեր կ'ելլէի զառիվերէն, գոհ ու երջանիկ:

Կը յիշե՞ս, անգո՛ւթ, կամացուկ մը ափիկդ կը սահեցնէի այն սիրապատում համակ շունչ սիրերգներս, որոնք միայն եւ միայն իմ խելապատիկիս արդիւնքը ու ծնունդը ըլլալով հանդերձ այսօր լքուած, իրենց այդ անոյշ օրերը կողրան խմբագրատուններու գեղակերտ զամբիւղիկներուն մէջ:

Կը յիշե՞ս մանաւանդ, չարածճի աղջիկ, երբ քիչ մը ուշ տուն երթայի եւ կամ հացագործին դրամը քու նուէրներուդ ծախսէի՝ հայրիկէս ծեծ կուտէի, մինչ դուն պատուհանիդ երկաթներուն ետեւէն ականջ կուտայիր հեծեծանքներուս ականքերուդ էն վերջինին ցուցադրումովը խնդալով:

Քանի՛ քանի՛ գիշերներ քեզ երազեցի, քեզ թեւերուս մէջ գրկել կարծեցի, բայց ախո՛ս, ումէն շարժումիս ինքզինքս աւխտակամածին վրայ գտայ գլուխս երկաթին զարնուած:

Քանի՛ քանի՛ անգամներ քեզ տեսնելու փափաքէն մղուած պատուհանիդ տակէն անցայ, ու դուն, ո՛վ անգութ, գլխէս վար երեսդ լուացած ջուրը թափեցիր, ջուր մը որ համակ սպիտակ էր: (Փռնոտայէն է, հոգ չէ):

«Միշտ քուկդ պիտի ըլլամ: Կ'ըսէիր աւելն անգամ որ աչքերուս մէջ արցունքը, բերնիս մէջ պաղատանքը, եւ ձեռքիս մէջ ջիջ ջիջ մէծիւնները տեսնէիր, բայց այսօր կը տեսնեմ որ իմս չես:

Սակայն գոհ եմ, քանի որ ուրիշի մըն ալ չես վերջապէս:

Զգացումիդ փոխարէն զգացում խնդրեցիր, եւ չգտա՛ր: Սիրոյդ փոխարէն սէր ուզեցիր, եւ չգտա՛ր: Սրտիդ դէմ սիրտ փափաքեցար, եւ չգտա՛ր: Հարուստ կուրծքիդ նեցուկ մը փնտռեցիր, եւ չգտա՛ր:

Երբ գտար, ինչո՞ւ յանկարծ լքեցի՛ր անգութ, մաքուր աղանի:

Ի՞նչ օգուտ քեզ անցորդներէն սէր մուրալ, երբ արդէն համակ սէր սիրտ մը քու ոտքերուդ տակ փռուած է:

Ապերախտ աղջիկ, սիրտդ պիտի վարձեմ ըսիր, ու ես ալ խաբուելով քու խօսքերէդ պատուեցի անոր փայէն վարձու տուն: Վերտառութիւնը: Ու ետքը լքեցիր զայն, ջախջախեցիր զայն, փճացուցիր զայն: Գոնէ թե՛ յը առած ըլլա՛յի, Հիմա ա՛լ ուզող մը չկայ սիրտս, վարձակալ մը չկայ սիրոյս: Ինչո՞ւ: Որովհետեւ դուն քու 44 թունդո մատներովդ ձերացուցիր զայն: (Նորոգել տուր անխելք):

Վերջին բաղձանքս ի՞նչ է գիտես, գոնէ քու գլխիդ ունենալ իմ մէջս:

Որպէս զի գէթ երբեմն զգամ զքեզ ու սիրտիմ:

Ա՛լ չեմ կրնար շարունակել, գրիչս յառաջ չ'երթար, բառեր կը պակսին ինծի, աչքերս կը պղտորին եւ գրաշարը տուր կը պօռայ երեսին:

Ե. Գ. — Բանագող չնկատուելու համար պարտ անձին կը համարինք յայտարարել թէ, այս յօդուածը գրած ենք հետեւողութեամբ: Պատկեր աչիս. գրականութեան ի մէջ հրատարակուած Մ. Շ. ստորագրութեամբ «Վա՛յս իմ սեռս» ին:

## ՍԽԻԻՏԱՐԻ

### ԱՂՔԱՏԱԽՆԱՄԸ

Սկիւտարի Թաղ. Խորհրդոյ կանանց սեղանին վրայ, այս միջոցիս, տեղւոյն Աղքատախնամի խնդիրն է, որ գրեթէ անուճելի հանգամանք մը ստացած է: Աղքատախնամի անդամները, ատենապետէն ըսկըսեալ մինչեւ մատակարարը հրաժարական տալու մասին կարծես մէկմէկու հետ կը մրցին: Պատճառը: Այս անգամ ալ դեղագործի խնդիրն է, որ տեղի տուած է հրաժարականներու տարափին: Անդամներէն ոմանք կը պնդեն թէ երեք թաղերու մէջ, զատ զատ դեղարաններու պէտք է յանձնել դեղագիրներու պատրաստութիւնը, եւ ասոր առաւելութիւնները հաստատելու համար կարգ մը փաստեր մէջ կը բերեն: Միւսները մէկ պատասխանատու դեղագործի մը յանձնելու կողմը կը տալեն, ասոնք ալ ոչ նուազ փաստեր նետած են մէջտեղ: Երկու կողմերուն ալ առարկութիւնները մէջ բերել հոս, չատ երկար պիտի ըլլայ թերեւս, եւ անօգուտ իսկ, բայց աւելորդ չենք նկատեր մատնանիշ ընել սա պարագան թէ՛ ինքնին աննշան խնդիր մը՝ չորս ամիսներէ ի վեր կը զբաղեցնէ անդամները, եւ աղքատախնամի գործը կը կաղայ այս պատճառաւ: Վերջերս Թաղ. Խորհրդոյ կողմէ Սուրէնեան, Պէղաղեան եւ Աւետիսեան էֆէնտիները աղքատախնամի անդամներուն հետ միահամուռ նիստ մը գումարեցին միջին եզր մը գտնելու համար, եւ պահ մը կարծուեցաւ թէ խնդիրը վերջացած է երկու հակառակ կողմերու կատարեալ համաձայնութեամբը եւ սակայն երկու օր վերջը հրաժարականները ծայր տուին, եւ Թաղ. Խորհուրդը ստիպուեցաւ իր օրակարգի գըլխաւոր խնդիրն ընել աղքատախնամի այս խառնակ վիճակը:

Թաղ. Խորհուրդը՝ որ կազմուած է կարող, բանիբուն եւ խղճամիտ անձնաւորութիւններէ, կը յուսանք թէ կտրուկ միջոց մը կը տնօրինէ միանգամ ընդ միշտ վերջացնելու համար ու եւ է նկատում, որ աղքատախնամի կենսական գործին վնասելէ զատ օգուտ մը չունի:

Թղթակից՝ Սկիւտարի

## ԱՂՋԻԿԱՍ ԱՆՈՐ ՉԵՄ ՏԱՐ

Հակառակ այդ ապրանքներէն որո՞ք մը չ'ունենալու, կրնամ երեւակայել թէ ծնողք մը, մանաւանդ մայր մը ի՞նչ դժուար կացութեան մը մէջ կը գտնուի երբ մէկէ աւելի աղջկան տէր է:

Իրեն համար ոչ ցորեկուան հանգիստը եւ ոչ ալ գիշերուան քունը գոյութիւն ունին, խեղճը աղջիկները տեղաւորելու միջոցին վրայ կը խորհի միայն:

Մինչդեռ հայր մը քիչ մ'աւելի լուրջ գոյն մը կուտայ այս խնդրոյն եւ անկէ աւելի հեռատեսութեամբ կը շարժի:

Իրաւունք ունի՞ — թերեւ:

Իսկ գալով միջնորդ կիներուն, ասոնք ալ ուզածնուն պէս կը խաղցնեն խեղճ մայրերը կորզելով շատ անգամներ անոնց դրամը՝ փոխարէն սին ու պարապ խոստումներու:

Անգամ մը որ այդ կիները ոտք նետեն տան մը սեմէն ներս, ալ դժուար է զանոնք տունէն հեռացնել: Ամէն օր մէկ մէկ տըղայ, ամէն օր մէկ մէկ թեկնածու կը ներկայացնեն ոսկեզօծեալ տիտղոսներով, եւ խեղճ մայրերն ալ չլացած այդ ածականներէն ժամ առաջ կուգեն ընցնել խնդիրը, առանց իսկ ներքինը լաւ մը քննելու:

Կարգ մը մարդիկ ալ կան, որոնք՝ իրենց ապագան շատ անգամ՝ կուգեն փնտռել ամուսնութեան մէջ, եւ առ այս չեն վարանիր այդ տեսակ աղտոտ կիներու դիմել, որ զրեթէ միշտ ցաւալի հետեւանք մը կ'ունենայ:

Մարդիկ՝ որոնք՝ քանի մը հարիւր ոսկիներ աւելի կորզելու նպատակաւ բարձր հովեր մը կ'առնեն, ինքզինքնին շատ ծանր կը ծախեն, չոգենաւին տոմսակը ու խմած սիկանին միշտ առաջին տեսակ կ'ըլլայ, նաւամասոյցէն տուն կառքով կը ճամբորդեն et reciproquement: Բայց մինչեւ ե՞րբ գիտէք, մինչեւ որ կարենան իւղոտ պատառ մը ձեռք ձգել, ալ անկէ վերջը աստիճանը հետզհետէ կ'իջնայ անզգալաբար:

×

Դեռ անցեալները երիտասարդին մէկը — որուն անունը չի տալու շնորհ կ'ընեմ — ներսիդիէն փափաք մը կ'զգայ ամուսնանալու, ու աչքը կը տնկէ Օրիորդ Հոռոփիկէն աւելի, հօրը՝ Կիրակոս աղային զրամներուն:

Միջոց մը կուգէ խորհիլ, տիրաւարու համար թէ՛ օրիորդին եւ թէ՛ մանաւանդ ունեցած հարստութեանը: Ուղղակի դիմել անկարելի կ'ըլլայ, հօրը լնաւորութիւնը շատ լաւ գիտէր, ուստի կը յաջողի գտնել միջնորդ էլպիսը, ու կը խոստանայ անոր կլորիկ գումար մը, եթէ կարենայ զուլս հանել գործը:

էլպիս սուտու, մէկ բառով՝ գործին տէրը կին մը, կը հաւանի երիտասարդին տուած պայմաններուն, ու կը խոստանա գործը կարգադրել:

Առաւօտ մը, Կիրակոս աղան արդէն մեկնած էր, ու կինը՝ տիկին Սողոմիկ տանը գործերով զբաղած, իսկ աղջիկը՝ օրիորդ Հոռոփիկ, տակաւին կը քնանար, ինչու որ, հակառակ հայ-լայֆ ընտանիքի մը պատկանած չ'ըլլալուն, սովորութիւն ունէր ցորեկէն երկու ժամ առաջ միայն անկողինէն ելլել:

Յանկարծ դուռը կը վարնուի, աւելորդ է ըսել թէ՛ այցելուն էլպիս տուտուն է:

Տիկին Սողոմիկ, որ իբր կարող կին մը կը ճանչնար միջնորդը, անմիջապէս կը կատհէ որ խաչըրջը լուր մը ունէր ստանալիք, ուստի լաւ ընդունելութիւնով մը սենեակ կ'առաջնորդէ:

Աւանդական որպիսութիւններ փոխանակուելէ յետոյ, էլպիս տուտուն խօսք կ'առնէ:

— Օրիորդը ո՞ւր է նայինք:

— Քիչ մը ըռահաթըզ է տէ տահա պառկեր . . . :

— Էյ անցած ըլլայ, ի՞նչ է եղեր քի . . .

Տիկին Սողոմիկ անմիջապէս ինքզինքին գալով:

— Չէ, հիւանդ չէ, էրէկ գիշեր միսաֆիր ունէինք քիչ մը շատ նստանք տէ անոր համար . . . :

— Հա, ատ է նէ պան մը չէ, մաշաւ-  
լահ ինտոր ալ աղւոր մեծցեր է, խերը տես-  
նաս, չիտակը տանտիկնութիւնը վրայէն կը  
վազէ կոր, անցած օր հետդ ժամ՝ պերէր  
էիր նէ, էյ սանկ վրան նայեցայ տէ քէֆս  
եկաւ, հիմա մախլամ ա, ատանկ աղջիկ բէք  
խըթ կը գտնուի, ամէն օր գործիս սահէէն  
մէջերնին էմ տէ կիտեմ . . . :

— Մեր ճընսը անանկ կերթայ, էլպիս  
տուտու, ըսել չ'ըլլայ, ճահիլ եղած ատենս,  
անցնող խաչին պիլէ չի նայեր . . . :

— Էս ալ ատանկ կիտնալովս էլայ տէ  
քեզի էկայ եա . . . :

— Ինչ կայ, խեր է նայինք . . . :

— Խեր է եա, իմ ծառքէս հիշ խայրը-  
սըզ պան մը իմացեր եա . . . :

— Չէ մարիկա չէ, հոգի պիտի տամ  
նէ, չէ . . . :

— Ծանրմ, թիւճարի մը ուշախը կայ,  
ուշախս ալ ինչ է եա, մարդը կայ քի ամէն  
պան անոր ծառքովը կ'ըլլայ խանութին մէ-  
ջը, ինծի եալվար էղաւ քի աղէկ տանտի-  
կին աղջկան մը սէպէպէնմիշ ըլլամ տէի,  
էս ալ միտքս քեզի դրի չիտակը . . . :

— Էյ շնորհակալ եմ, վո՛վ կ'ըլլայ, ա-  
նունը ի՞նչ է . . . :

— Անունը լաղապը խօլոյ է ամա, դուք  
սանքի սանկ աղէկուք մէկը ըլլայ նէ մինչեւ  
քանի օսկի թռախօմա կուտաք . . . :

— Իրաւոր էլպիս տուտու, հարը տահա  
աղէկը կիտէ ամա զաննըմ մինչեւ իրէք հա-  
րուր մը տալու միտք ունի . . . :

— Էյ առանիս բէք մեծ ֆառը մը չի  
կայ եղեր, անիկա հինգ հարուրնոց մէկը  
կուզէ կոր ամա, արթըխ անէքի ես մէջն  
եմ նէ հինգ վեր հինգ վար ույտուրմիշ կ'ը-  
նեմ, կերթայ . . . :

— Աղէկ ամա, նէճի՞ է ըսիր . . . :

— Ծանրմ իշտէ թիւճարի քով է, վրան  
նայիս նէ խօշդ կուգայ, բալապըյըխ տէլի-  
խանը մը, քիպարութիւնը ըսես վրայէն կը  
վազէ, անանկ դուրսի տղայ չէ, առտուն  
գործին կլիւր՝ իրիկունը տունը, խենթ  
կ'ըլլայ կոր քիմ կարգըվիմ, կընիկս էթու-  
ֆըս առնեմ տէ պարապար պըտըտցնել տա-  
նիմ, աղւոր վախթ անցնենք տէի, ինծի  
նայէ տիկին Սողոմիկ, էս էրդուսըմ եմ,

մարդը կրակը չեմ էրեր, աղէկութիւն մըն  
ալ կայ գործին մէջը, պարկմ ան ալ ըսեմ,  
տղան մար չունի, կիտես եա, հիմակուան  
կեսուրներուն խաղըն ալ զօռ է քաշելը . . . :

— Օղջ ըլլաս էլպիս տուտու, էս աս գի-  
շեր Կիրակոս աղային լախըրտըն պանամ տէ  
էրկու օրէն մէյ մը էկուր, ինչ խըսար զահ-  
մէթ է նէ . . . :

— Տէր օղորմեայ, զահմէթը ինչ է, էս  
աղէկութիւն ընելու համար պան մը էսիր-  
կէմիշ չեմ ըներ . . . :

— Ծնորհակալ եմ, ամա, տղուն անունը  
ֆիլան ըսիր քի կլխաւորիս հասկցունէի . . . :

Արդի սովորութեան համեմատ, էլպիս  
տուտու գրպանէն քառթ մը կը հանէ, ո-  
րուն վրայ գրուած էր՝

Ռաիսայեղ Չուշոյումագեան

— Պարէմ գործին տեղն ալ թարիֆը-  
նէիր քի զօռութիւն չի քաշինք . . . :

— Աղէկ մը չիյտեմ ամա, զաննըմ Պաղ-  
չէ խաբուն թառաֆն է, խօշ ամէնը կի-  
տես, պէլլի մարդ է, Կիրակոս աղային մի-  
նակ անունը տաս նէ կը ճաշայ . . . :

— Էյ բէք աղէկ, իշալահ խայրը պան  
մը կ'ըլլայ տէ, առջի պսակին հարկը կը-  
նենք կը լնցնենք . . . :

— Հա եա, աղէկ կ'ըլլայ, առջեւնիս ալ  
զաթը ամառ է, կէօքսէրնին կէօրէ կէօրէ  
թող պըտըտին տէ, զէվըը հանեն, ըսելով՝  
էլպիս տուտու ուրախ զուարթ կը մեկնի  
տունէն, քաջալերուած տիկին Սողոմիկի  
խօսքերէն :

×

Իրիկուն է :

Կիրակոս աղա գործէն վերադարձած,  
իրեն սովորութեան համաձայն՝ օղին զլու-  
խը կանցնի, քանի մը հատ ճնկելու :

Տիկին Սողոմիկ, քովիկը նստած է, իսկ  
օրիորդը արդէն ցորեկունէ գաղտագողի  
քիչ մը իմացած ըլլալով խնդիրը, պատ-  
րուակաւ մը մինակ կը ձգէ ծնողքը, որպէս  
զի խորհրդակցին օրուան էն կենսական  
խնդրոյն վրայ :

— Մէկ հատ մըն ալ լեցունեմ Կիրակոս  
աղա, խօսք կառնէ կինը :

— Քա կընիկ, ատ մէկ հատ մըն ուլ լե-  
ցունեմ ըսած վախթդ, էզաներա թէքմիլ

դող կ'ելլայ, զէրէ կ'իտեմ քի մութլա-  
խա չըխաճագ պան մը ունիս ատոր տակը:

— Տէ էրկան մըներ, իմանաս նէ' . . .  
ամա չէ, աս հաժատիսը խօլայ խօլայ չեմ  
իտար . . . :

— Երկու ըռախի պիտի խմեմ նէ ու-  
ռուֆը քիթէս հանել մի տար կընիկ, ինչ է  
նէ սահաթ մը առաջ ըսէ քի ըռահաթնամ:

— Ի՞նչ պիտի ըլլայ, աղջկանդ գործը . . .

— Աղջկանս գործը մի՞, քա կընիկ խալթ  
մը խառնեց ինչ ըրաւ . . . :

— Չէ ճանրմ, միտքդ ալ պիր տիւզիւ  
կէշութեան էտէվէ է, հիշ ունմիշ կ'ընես քի  
ինծի պէս հէլալգատէի մը զաւակը պիշիմ-  
սիզ պան մը ընէ . . . :

— Կ'իտեմ անանկ ըլլալը ամա, էյ աշ-  
խարք է ետվրում, ամէն օր մէկ մէկ պան  
կ'իմանանք կոր . . . :

— Հէլէ մէկ հատ մըն ալ խմէ նայիմ,  
սա միտքէն ալ մէզէ մը առ, նայէ, ու-  
տելը իլէն պահելը աղբար է, սա պիպէռ  
թուռչունին սօն պահարէն պէրի պահեր եմ,  
մատուռներս սիրեմ, քացախին ըռէնկը պի-  
լէ չէ տառցեր . . . :

— Հիմա թուռչին ֆիլան մէկ թառաֆ  
ձգէ տէ էղածը ըսէ նայինք . . . :

— Ծանրմ, աս առտու խըլաժուզ էլպիս  
տուտուն էկաւ, ծառքին տակը չի գտնուած  
տէլիխանը մը կայ էղէր, Հոռորիկին հա-  
մար ըսաւ, հէմ թիւճարի քով է էղեր, հա-  
սըլը կուզէ կոր քի մեզի խըսմէթ ըլլայ,  
պաշխասիները չիմացածտան . . . :

— Էօ՞ֆ . . . սա սօնը ըսածներդ ա-  
ռաջ ըսէիր տէ խմածս խաֆաս չի ցատկըց-  
նէիր նէ չէ՞ր ըլլար, էյ բէք աղէկ, տուն  
կը ճաշնաւ կոր տղան . . . :

— Քա էս ո՞ւր պիտի ճաշնամ, ամա բէք  
մէթ կ'ընէ կոր, ինչ է նէ Ասված ողորմե-  
ցաւ, զէրէ անցած օր ժամ կացի նէ պոյին  
կէօրէ մոմ ուխտացի . . . :

— Քա աճէլէ մընէր նայինք կընիկ, ա-  
նանկ շառլաթան լախըրտըներ ալ հիշ մտիկ  
չեմ կրնար քներ, բարա մարա կուզէ՞ կոր  
էղէր . . . :

— Հինգ հարուր օսկի կուզէ կոր ամա,  
էլպիս տուտուն քանի մը օսկի պակասով կը  
մնցնեմ ըսաւ . . . :

— Ինչի՞ թիւճար է ըսիր . . . :

— Թիւճար չէ ճանրմ, թիւճարի քով է . . .

— Օ՛խ, եէտիի հայթա պագ, քա աս  
առա թիւճարներուն ատ խըտար իխթիպար  
չեն ըներ կոր, ուր մնաց ուշախներուն, քա  
քեզի ո՞վ ըսաւ քի Կիրակոսը բարաները  
եապանը կըտեր է տէի, իսպար է՞ս, գի-  
շեր ցորեկ պէկիրի պէս աշխըտեր էմ, թէք  
ինչ է, էխթիարութեանս քիչ մը ըռահաթ  
ընեմ տէի, է՛յ, հիմա ալ ունեցածդ էլին  
տղուն աժուճը լեցուր, ի՞նչ է, աղջիկդ պի-  
տի առնէ, մէրագ մընէր, անանկ մարդիքը  
օռթան էն էլեր նէ կարգըվէլէն էվէլ՝ քանի  
մը օսկի չարմիշ ընեն տէի է, անոնց քի-  
պար եանքէսէճիներ կ'ըսեն ետվրում . . . :

— Աղէկ ամա, աս բիացաին ալ բարա-  
սըզ աղջիկ առնող բէք խըթ կայ . . . :

— Քա մարդ մը եօռղանին կէօրէ ոտ-  
քերը կ'երկնցնէ, չի նայիս, հէրիֆը ուշախ  
հալովը էլէր հինգ հարուր օսկիով աղջիկ  
կուզէ կոր, պապան է տուեր զէյէր . . . :

— Ծանրմ, կիթնալ բէք ալ վար մէկը  
չէ, նայէ քառթավիզիթա պիլէ շինել տուեր  
է տղան, ըսելով՝ կը բերէ քառթը, զոր  
Կիրակոս աղան կաղին բռնելով կը կարդայ,  
ՌԱՓԱՅԵԼ ՉՈՒԼԹՈՒԹՄԱԶԵԱՆ:

— Քա՛, թէվէբէլի չէ քի հաժու կլիտու  
խըտար խելք չունիք կ'ըսեմ եա, ասոր հա-  
րուրը հինգ զրուշի գործ է, պօյաճի Ռա-  
փիկն ալ քառթավիզիթ շինել տուեր է, հէմ  
եալըզլը գիրերով, զէյէր ան ալ հազար  
օսկինոց աղջիկ մը առնելու է, էյի եա, պէն  
պու հէրիֆի թանըյաճաղըմ կիպի կէլիօր,  
ըսելով գաւաթ մ'ալ կը լեցնէ այդ կիւզդու-  
րիչ ջուրէն, ու կըսկսի քիչ մը մտածել:

Տիկին Սողոմիկ, նշարելով որ ամուսի-  
նը բաւական կը տանջուի ճանչնալու համար  
այդ միւսիւ Ռափայէլը, կ'աւելցնէ.

— Ալլաալէմ քի, գործն ալ Պաղչէ խա-  
բուին թարաֆն է էղեր . . . :

— Քա՛ հասկցա՛յ, սա սուլու Ռափիկը,  
հա՛, վա՛յ քահալէ օղլու, քա թող տակին  
բանթօլօն մը չինէ տէ՛ ետքը կարգըվելու  
էլլայ, ամմահա սուռաթ վար ըմբշ հա,  
հինգ հարուր օսկի հէ՛, թո՛ւհ, աճապա վը-  
րայ բարա տայ նէ աղջկանս թըռնախը կը  
ցուցնեմ, նայէ կընիկ, իրիկունով ինծի

մեղքը խօթեցիր, խմածս ալ կերածս ալ քիթէս պէրնէս էկաւ, տա էլպիս է ի՛նչ է. գայ նէ ըսէ քի՛ թող պաշխասիին բռնգտն- թէ ընէ աս մաթահը . . . :

— Աման դուն ալ հիչ մարդու չես հաւ- նիր, պանքի տարիքն ալ էկաւ հասաւ, չիյ- տեմ քի աղջիկդ սալամուռան պիտի դնես ի՛նչ պիտի ընես . . . :

— Քա ատանկ զիւպպէներուն էա աղջիկ չեմ ի տար, տահա աղէկ է քի՛ սօնրա էլին տղուն հետ տունս իյնալուն, թող հիմակ- ուրնէ նստի տէ իմին հացս ուտէ . . . :

— Էյօր ատ խըտար պարակը փնտռելու ըլլան նէ՛ կարգըվելուն մօտան ալ պիտի ասնի . . . :

— Մատամ, աֆ կ'ընես ամա, բէք ա- ճէլէ կընես կոր, չէ նէ մի . . . :

— Տէ՛, կէնէ մի պաշլայեր . . . :

— Անանկ է նէ ի՛նչ կ'ըսեմ կոր նէ մը- տիկ ըրէ, հէմ ատ տղուն լախըրտըն մէյ մըն ալ չընես հա, անոր ինչ չիչէք ըլլալը ալէմ կիտէ, թող խսմէթը պաշխա տեղ փնտռէ, հայտէ կերակուրին վախիթն ալ կ'աննի կոր, Հոռուր ո՛ւր է, մասան շտկե- ցէք տէ էրկու ըփամա պան ուտենք . . . :

— Ճանըմ, էլպիս տուտուն ալ բէք պօշ կընիկ չէ . . . :

— Պօշը լեցունը չիյտեմ կոր, ճուղապ ուզելու գայ նէ, մեզի կէօրէ չըլլալը կը հասկցնես, գէրէ սէքսէն տարի ալ տունս մնալը կ'իտնամ նէ նորէն ԱՂԶԻԿՍ ԱՆՈՐ ԶԵՄ ՏԱՐ:

ՆԵՐԵԱՊՈՒՀ

## ԲԱՅ ՆԱՄԱԿ

Համեստափայլ զագէթածի

Պարոն աղբարիկս,

Առաջուրնէ ինքզինքս բռնգտնթէ ընեմ: Աստուած ողորմի հոգույն՝ Մարինոզ տու- տունին տան եմ, գիտես ես ինչ աղւոր պա- ներ կը գրէր զագէթախի մէջը, ես ալ քիչ շատ կրող կարգացող եմ, մէնչուր ըրատալուր Բանսիմէ տուտունին չըրախն եմ, աղւոր տան կլլալ քիթեր կը գրեմ քի հիմակուան բանգուհիները խապար պիլէ չունին:

Երկու հրեշտակ ձեռքերնին կախած դէմ- դէմի կայնին նէ՛ Ս կըլլայ: Մէկ հրեշտակ

մը թեւերը կախած կայնի, մէկ մալ մեռելի պէս ոտքին տակը պառկի նէ՛ Լ կըլլայ:

Հիմաճուկուանները ասանկ ուսումնակա- նութենէ խապար չունին:

«Երանեալ է այր որ ոչ գնայ ի ճանա- պարհս մեղաւորաց չը ջուրերու պէս գոց կը կարդայինք, անոր մէջն ալ քանի հատ (ա) կար նէ կը համրէինք միաքերնիս կը պահէ- ինք, հարցունողին՝ չըփ տէի պատասխանը կուտայինք: Հիմակուանները մինակ ֆոէնք- ճէ մը սորվեր են, ֆինք ֆօն ըսելով կեր- թան: Քա՛, աղբարիկս, ըսածնին պարէ մա՞րդ հասկնայ:

Եչը թողունք, զան նայինք, կըսէր ողոր- մած հոգի պարոնտատս, հասկըցունելիք պանս սա է, քա օրդտի, թօռըս տրսէվէ եղեր է, պիւիւճի սալար պաշ Նուրուֆարին տարի չօճօխս, տրսէվէի թէրթիպ մը թարիֆ ըրաւ, ես ալ խերուս կը գրեմ կոր, տրսէվէ ըլլողին պիրապիր է:

Ավուճ մը բրինձ, ավուճ մը աղ, մէկգմէկ կը խառնես, ժամուն պակը կը ցանես, «կա- րապետ աւետարանիչ տրսէվէս տէֆ ըրէ՝ ըսելով: Թարիֆ ըրածիս պէս, չօճօխս առի ժամ տարի, ժամուն մէջը կռիւ մը, կռիւ մը քի. ի՛նչ տեսնամ, կընիկ մը, աղւոր ծանը տէրտէրի մը պաներ մը կըսէր, աս կընիկը նշանած աղջիկ մը ունի եղեր, տէր- տէրին տղան ալ ՏԱՆ-ՊԻՍ ըլլալով, զէնահա- թը սորվելու համար՝ անոր ասոր տունը եր- թալով պէտիհապա ակուայ կը քաշէ եղեր, այս զավալը կընկանը տունը տատանմիչ կըլլայ, հիմա մոհալլէին մէջ ամէնուն ջաւ է ըրէր քի, ես նշանած աղջկանը հետ ժամանակ անցուցի: Տէրտէրը երկու ձեռքերը վեր վերցընելով, «չէ՛, չէ՛, իմ աղաս ոտանկ բան չէ ըսեր» կը պօռար: Կընիկն ալ կըսէ քի, «Երեցկինդ ալ վրաս կռիւի գալով քսան հոգիին մէջը տղաս աղջիկանդ հետ ժա- մանակ անցուց» տէի պանկու պանկու պօռաց, Աստուծմէ չի վաղցողներ, ասոր ի՛նչ պիտի ըսես, հիմա աղջկանս նշանը ետ պիտի ըլլայ:

Զաւալը կընիկը կուլար կոր, վո՛ւյ պա- պանծին հէմէն ասանկները: Ժամուն մէջը եղողները մեխկըցան զավալը կընիկը, ես ալ մեղաց տէր ըլլալով՝ տրսէվէին թէրթիպը ժամուն բակը ցանելով տուն գացի:

Սա ՏԱՆ-ՊԻՍ բառը թերճիմէ ըրի՛, զա- գէթացի աղբարիկս, քիտես ի՛նչ ըսել է. «տուներուն մէջ բիս հոտող քսել է», չի հասնին ասանկները, տուներուն մէջը մըտ- նելով ելլելով, ասանկ բիս հոտեր կը հանեն:

ՊԵՆԿԼԻ ԹԱԼԻԹԱ

# ՀԻՆ ԷԶԵՐ

ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Նստէք ի մեջդիս (1)  
 Հարձք եւ եղբարք  
 Եւ մեծ պարոնայք,  
 Գոհանամք զտեսնէ  
 Որ ունիմք սեղան,  
 Եւ դուք շէն կենայք:  
 Խնդրեմ որ այսօր  
 Բան զամենայն օր  
 Շատ ուրախանայք:  
 Թասերըն զինի,  
 Կարմրիկ զինի,  
 Զեզ անոյշ լինի:  
 Ատա՛ (2) Կարապետ,  
 Տակառապետին  
 Գնա՛ իմաց տո՛ւր,  
 Կառասներըն բաց  
 Եկ իմաց տո՛ւր մեզ,  
 Եւ ուրախացո՛ւր:  
 Շաշեֆըն (3) լից, բեր,  
 Թաս տո՛ւր խմացո՛ւր:  
 Ղալապալուխ (4) է,  
 Քէֆերս է հալեալ  
 Այսօր խիստ աղէկ:  
 Սեղանըս լըցեալ,  
 Միրգեր եւ ծաղիկ,  
 Զլինի վեր քաղէք:  
 Ատա, հով (5) կերէք:  
 Սրտով խըմեցէք  
 Ուրախ ծիծաղէք:

Թասերըն չինի եւլն.  
 Ապա ով արտի  
 Քէն ունի, հանէ,  
 Հաշտութեամբ մնայ  
 Հաւ մարդն այն է  
 Որպէս եկեալ է  
 Էլ (6) այնպէս գնայ:  
 Թասերըն չինի եւլն.  
 Շորմալէն (7) համեղ  
 Գինին է զօրեղ,  
 Դուք անոյշ արէք:  
 Մինակ մի ուտէք,  
 Հաւ բաժանեցէք  
 Հաւասար արէք:  
 Տաղերըն կանչէք  
 Սաղերըն ածէք,  
 Մափտուէք, պարէք,  
 Է՛ր չէք խնդալի:  
 Այսօր ունիմք մենք  
 Հաւ զինի սառըն,  
 Տապու (8) խորովու  
 Հաւու քապապներ,  
 Ու խաշըմայ գառըն  
 Էս (10) մէջլիսումըն՝  
 Տխուր եւ դառըն,  
 Մարդ չլինի խառըն:  
 Թասերըն շարած  
 Ողջ ոսկեջըրած  
 Խըմօղն է օրհնած:

- (1) Ընկերութեան մէջ,
- (2) Ա՛յ տղայ:
- (3) Շիշեները, (չիշերը):
- (4) Բազմութիւն (զալապալուխ):
- (5) Ակնարկութիւն տեսակ մը մէջը պա-  
 րապ եւ դուրսը կեղեւով պատած անուշե-  
 ղէնիմը:
- (6) Աւ:
- (7) Թերեւս չոր մեզեկ իմաստով:
- (8) Ըրէք:
- (9) Տապկուած:
- (10) Այս:

Ծանօթութիւններ. — Յիշեալ ոտանաւոր  
 զնկարկած է 15րդ դարու նշանաւոր  
 հայ բանաստեղծ եւ Տիարալէքիւրի առաջնորդ  
 ՄԿՐՏԻԶ ԵՊՍԿ. ՆԱՂԱՇ: Այս բանաստեղծ  
 եպսկ.ին կենսագրութիւնը մասնաւոր հա-  
 տորով հրատարակուած է: Իր բանաստեղ-  
 ծութիւնները ստուար թիւ մը կը կազմեն,  
 անոնցմէ մէկ մասը միայն հրատարակուած  
 է, իսկ մնացածը ձեռագիր կը մնայ փոշե-  
 թաթաւ:

Նաղաշ ճամբարիտ բանաստեղծ մը եղած  
 է իրաւամբ: Բացի իր եղերերգութիւններէն  
 եւ կրօնական քերթուածներէն նշանաւոր  
 են իր ուրախութեան, սիրոյ եւ գինիի շա-  
 ղերը:

Մեր հրատարակած «Տաղ ուրախութեան»-ը  
 մէկն է այս ցօռթի վերաբերող քերթուած-  
 ներէն, ուր բացի ոկրամոլական նուրբ ճա-  
 շակէ կը փայլի նաեւ երգիծական բնատուր  
 ձիրք մը:

Նաղաշի լեզուն ժամանակին ռամկօրէնն  
 է, համեմուած խանձարուրի մէջ եղող աշ-  
 խարհաբարի մը սերմերով, բայց տեղ տեղ  
 ալ կենցաղէն է գրաբարի ազդեցութիւնը:

Կը խոստանանք ուրիշ անգամներ ալ հը-  
 րատարակել Նաղաշի երգիծական ուրախու-  
 թեան տաղերէն:

ԳՐ. ՀԱՄԲԻԿԵԱՆ

— Բժիշկները ինչո՞ւ հիւանդին տունը  
 շատ չեն կենար:

— Որպէս զի այցեգիրը չի մոռցուի:

• • •

— Ի՞նչ է սերը:

— Սակ մարեղու միջոց, հարիւրին հինգ  
 տոկոսով:

• • •

— Կիրակոս, վաղը առտու ժամը 11 1/2-ին  
 ձայն պիտի տաս ինձի, չմոռնաս հա՛:

— Ոչ սեր իմ, դուն ո՞տք զարնեղու  
 պէս, ես վեր կը վազեմ ձայն կուտամ:

# ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

**ՂԱԼԱԹԻԱ.** — Առիթէն օգտուեցէք, բոլորովին սպառելու վրայ է Գլխիկոր Մ. Խասին

«Դեռ տեսա մեքը կորաւ»

անուն զրբոյկին Ա. Տիպը :

**Ծ. Խ.** — Բ. Տիպը հրապարակ չեղած փորձերը երուանդ Տէր Անգրէասեանը մէյ մը տեսնէ թող . . . :

**ՕՐԹԱՔԷՕՑ.** — Մարգուհի մէկը, իր բաղնիքի «փէշտիմալ»ը չորնալու համար «խուրմա»ի ծառէն կախեց : Այս առթիւ «խուրմա»ի ծառն ալ կեանքին մէջ շուրի երես տեսաւ :

**Ծ. Խ.** — Մարգուհի քովը կենայ որ դպրոցի տղաք ձիւն մը չբերեն «փէշտիմալ»ին գլխուն . . .

**ԼՈՆՏՈՆ.** — Հոս վերջերս ծաղիկ մը (orfsk) ծախուեցաւ 30,187 ֆր.ք.ի :

**Ծ. Խ.** — Կատակ չհասկնաք, կաշաչեմ, ծաղիկ մը որ 30,187 ֆրանքի ծախուեր է : Մենք ալ հոս «Ծաղիկ» մը ունինք, բայց 40 փարայի կը ծախուի, մէջը ունենալով հանգերձ այնքան բարի-ծաղիկներ, զորոնք հոտուրտացողին քիթը անգամ կ'իյնայ :

**ԺԸՆԷՎ.** — Ժօզէֆ Շթաքէր անուն երիտասարդ մը ամուսնացաւ 18 տարեկան աղջկան մը հետ, որ ոչ ուր ունէր ոչ ալ թեւ : Պսակադրութեան տեւողութեան ատեն փեսան իր թեւերուն մէջ բռնեց հարսը :

**Ծ. Խ.** — Կ'երեւայ թէ «սէյրի օն փարայա» ցուցադրելու համար առած է, վասն զի խեղճ հաշմանդամը իր աղջիկներութեան ժամանակն ալ «Անէթա իշխանուհի» անուան տակ կը

ցուցադրուի եղեր ոսկեղօծ թիկնաթոռի մը մէջ հանգչած :

**ԱՄԵՐԻԿԱ.** — Եանքուհի մը դատարանին դիմելով ամուսնալուծում պահանջեր է, յայտնելով թէ իր էրկանը հետ ամուսնացած միջոցին մօրուք ունէր, իսկ հիմայ մօրուքը ածիլած ըլլալով առջի լրջութիւնը կորսնցուցած է : Ուրիշ Եանքուհի մըն ալ ամուսնալուծում պահանջեր է, վասն զի իր ամուսնացած ժամանակը, էրիկը ածիլուած է եղեր, իսկ հիմայ մօրուք թող տուած ըլլալով լուրջ կերպարանք մը ստացած է : Դատարանը ամուսնալուծման վճիռ չէ տուած ոչ միոյն և ոչ միւսին :

**Ծ. Խ.** — Ամէնէն դիւրին միջոցը զանց առնուեր է : Էրիկներնին թող փոխեն, խոշոր մէջտեղէն կը վերնայ, կը լմնայ :

## ԳԵՂԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ՅՈՒՅԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Սինկէրի ընկերութեան կազմակերպած գեղարուեստական ցուցահանդէսին բացումը տեղի ունեցած է, Բերա Պոն-մարչէի դիմացի շէնքին մէջ : Մասնաւոր սալօնի մը մէջ ի տես դրուած են արուեստագէտ և անաթոն կիներու կողմէ ասեղնագործուած գեղարուեստական արտադրութիւններ մին միւսէն աւելի գերազանց և աչքառու թէ՛ գեղարուեստի և թէ՛ ճարտարարուեստի տեսակէտներով : Կը վստահացնենք մեր ընթերցողները թէ շատ գոհ պիտի մնան անգամ մը այցելելով սոյն գեղարուեստական ցուցահանդէսը :

ՕՔ ՆՈՔ

ԼՈՒՔ ՆՈՔ

ՈՏԱՆԱԽՈՔ

Կրօնական ժողովն իր վերջին նիստին  
Նշկասի առաւ ո՛չ նոր ու ո՛չ հին  
Ամուսնաւորման խրնդիր մը կրէին  
Ու տաւ վրձին արդար ու մեկին:  
Կին ուրն Մառի առաւ զոհացում  
Չի իր ամուսին անուն Համբարձում  
Լրջելով զինքն տաւ եր իր սիրս  
Յոռի կիներու իրեն նշման բիրս:  
Կինն արտօնեցաւ վերամուսնանալ  
Այրը կորսնցուց այդ իրաւունքն ալ:

X

Մամուռեան որդի, մեր պաշտօնակից  
Որ ունի անուն պատուաւոր անբիծ  
Իր հրատարակած մեկ բառին համար  
Անշուշտ չե՛ք մոռցած, բառն էր «ամպարար»:  
Ծեղի ունի տուգանք տրուած էր վրձին,  
Չոր չընդունելով տաւ է իսկոյր  
Վերաֆնէնութեան վերին ասեւին  
Որպէս զի դասը նայուի վերջսին:

X

Հարիւրեան ազնիւ Սահակ եփեմէսին  
Որ դեղագործըն է Կեւեյիկին  
Ընտրեցաւ տեղոյն, առաջին անգամ,  
Կառավարական ժողովոյ անդամ:

X

Կարդալ չը գիտցող մեկ ֆանի անձեր  
Իբրեւ տրտման են ներկայացուեր  
Այնուր Յովսէփ եպիսկոպոսին  
Ձեռնադրել տրտման անձն միասին:  
Եպիսկոպոսն ալ արդար բարկութեամբ  
Մերժեւ ու դիմեւ է եւ իրաւամբ:

X

Ամուսնաւորման, ամուսնաւորման,  
Բախտեցաւ կապը, ըսկրաւ մրցում  
Ինչ որ ձեզ հիմա պիտի պատեմ ես  
Ունի վիպական նախնայնքն պէս պէս:

Մորաշայցի մը՝ Թարութիւն անուն  
Վարժունի Ծիցոն ունէր կին սիրուն,  
Հագիւ քե Աստուած տաւ մի զաւակ  
Խեղճ Ծիցոն մեռաւ մահով դժբերակ:  
Ուսի մարդուկը՝ մըսածեց իսկոյն  
Ուրիշ կին առնել իր զաւակն սիրուն,  
Պիտէիկի մեջ ամուսնացաւ նա  
Աղջկան մը հետ անունով Աննա:  
Աննան՝ չար աղջիկ՝ եղաւ չար կրնիկ  
Ուզեց վերջնել մեջ տեղէն մանկիկ,  
Ու յաջողեցաւ, տալ վերջ փոքրիկին  
Չարացար մահուամբ, անմեղուկ կեանքին:  
Արդարութիւնը կիսանայ ոճիւր  
Կը ձեռքակաշէ կուտայ իր վրձին:  
Հիմալ որ Աննա՝ մեջը սեւ բանին  
Կը ֆառէ իր մեղք, եղեւնը մըրին,  
Թարութիւն դիմէ առաջնորդարան  
Որ վրձին առնէ ամուսնաւորման  
Եւ արտօնութիւն կրկնամուսնութեան  
Չի զաւակն՝ կրտսէ, պէտք է նոր պաշտպան:

## ՅԱԶՈՐԴ ԹՈՒՈՎ

## ՉԱՏԿԻ ԱՌԹԻԻ

|                |               |
|----------------|---------------|
| ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Տ.  | ՔԱՍԻՄ         |
| ԷԼԻԶ ՀԱՃԵԱՆ    | Բ ԼՈՌԻԹԻԻՆԵԱՆ |
| ՍԻՄԵՈՆ ԾԵՐՈՒՆԻ | ՆԵՐՇԱՊՈՒՀ     |
| ԳՐ. ՀԱՄԲԻԿԵԱՆ  | ԵՐՄՈՐ         |

## ՊԷՆԿԼԻ ԹԱԼԻԴԱ

ՕՐ ՆՈՐ ԼՈՒՐ ՆՈՐ ՈՏԱՆԱԽՈՐ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵԼԱՅԸ ԵԼԱՅԸ ԵԼԱՅԸ

Արտօնաւոր մարտի ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՆ Ե՛ ԱՍՏԱՌԻՐԵԱՆ

Պապը այլ ճատտեփ, քիւ 52



# BOVININE

## ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՄԵՈԻՆԴ

ՓՈԲՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ անհային մասերն եզան ման, ուղեղին, ողնուղիղին և ֆոսֆորինի սկրապին կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ։ Պոյիս նոր բերուած այս անզուգական կազդուրիչ դեղը, գնահատուած համաբաւար թիշկներէն. ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, գալկութիւն, անխորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջրային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»։ Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐՔ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը։ Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից միջերանոցներու քով։

50—36

### ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐԱՆԳ, ԿԱՆԱՆԵԳ ԵՒ ՏՊԱՅՈԳ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

### Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Գ. Պոյիս, Սուրբաւ Հաւաւ, Բօփուգեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տոկունութեամբ և գիներու անմիջելի աժանութեամբ շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուստներու, կանանց բեղրութիւններու և տղայոց շիք և դիմացկուն փոքրիկներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից։

Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրշ. է։

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին։ 50—30

### ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սողանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՝ փնասա-

կար նիւթերէ բոլորովին զերծ է։

Յիշեալ ջուրը մաշկերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին կայսեր. Բժշկական վարժարանի որոյմամբ ամէն կողմ պէտք եղած հրահանգները տրուած են, ասկէ զատ ձերիտեի Վեգուի Թըլպայի միջոցաւ մասնաւոր ազդարարութիւններ եղած են։



Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապառողջիկ ջուրեր պատրաստելով իրեն տեղական ապրանք կը ծախեն։

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մաշկերը, զգուշացէք այս կարգի աղտոտ ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուր ու զուտ ստանալու համար դիմեցէք Մահմուտ բաշա ճատտէսի, յիշեալ Արամ Էֆ. Սողանճեանի 121 թիւ անուանաւորութեանց վաճառատունը, ուր պիտի գտնէք մաքուր ջուր ձեր մաշկերուն գունաւորման համար։

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սողանճեան ստորագրութեան։

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սողանճեան ստորագրութեան։

# Հ Է Ր Ճ Ա Յ Ի

## Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօյի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հաղուսաներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուններ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաեւ կահկարասի, ձեղունի յամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիտիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

### Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայլծայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿՍՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-26

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։

### ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՌԹԻԻ

|                                      |         |
|--------------------------------------|---------|
| Արեւազալի տետր                       | 30 փր.  |
| Շարականք, տաղք եւ ալէլուք            |         |
| Աւագ շաբթու                          | 40 փր.  |
| Ս. Զատիկի ծրագալոյցի գիրքերն առանձին | 20 ղրշ. |
| Երգեցողութիւն Ս. Պատառագի բոլորագիր  | 30 փր.  |
| Այսօր անճառ գրաբար եւ աշխարհաբար     | 2 ղրշ.  |
| Փառակազմ աղօթագիրք 5-10-17-25 ղրշ.   |         |
| Սաղմոս կիսակաշի աղօթքներով միասին    | 4 ղրշ.  |

Դիմել մի միայն Մարգարեան գըրատուն Կ. Պոլիս Մերճան թիւ 57։

### Ք Ա Ս Ի Մ Ի

#### ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆԱՐԵԿԸ

Ս. Գրիգոր Նարեկացիի այս հոգեշունչ մատենը, որուն ամբողջութիւնը գրաբար բնագիրէն հասկնալի ու մաքուր աշխարհաբարի մը թարգմանած է Քասիմ, Մեծ Պահքի առթիւ կը յանձնարարուի ամէն Հայ քրիստոնէի որդիտէ վայելք զգալ հոգեկան հաճոյքներով։ Կը ծախուի Մանգուսի խրմբագրատունը մէկ արծաթ մէճիտ գինով, գաւառներէ փօսթի ծախք չի պահանջուիր. արտասահմանի 4.50 ֆր.։